

Ա Ր Ե Վ Ե Վ Զ Յ Ո Ւ Ն



արդու մը ձայնը, վեմե մը ե-
լած, զայն անվանեց Որդի Մար-
դո. ուրիշ ձայն մը, ամպե մը ելած,
զայն պիտի կուե Որդի Աստուծու:

Ամենաբարձր է Հերմոն լեռը և երեք
կատար ունի. ձյունախաղաղ՝ կրակի եղա-
նակին իսկ. Պաղեստինի պինդ բարձր լե-
ռը, ավելի բարձր քան Թարոր: Հերմոն լեռ-
նեն, կըսե սաղմոսերգուն, կուգա ցողը Սիո-
նի թլուրներուն: Այս լեռան վրա, լեռներուն
ամենաբարձրը Քրիստոսի Կյանքին մեջ, որ
իբր հանգրվան ունի բարձունքները—Լեռ
փորձության, լեռ երանությանց, լեռ այլա-
կերպության, լեռ խաչելության—Հիսոս բո-
լոր լուս եղավ:

Երեք աշակերտներ միայն էին իր հետ.
ան, որ Վեմ կկոչվեր և Որոտման որդիները:
Ժայռը և Մրրիկը, ընկերություն՝ Համար
տեղվուցն և վայրկյանին; Կաղոթեր միայն,
մեկուափ, բարձրը, անոնցմե և ամենքին ա-
վելի բարձրը գուցեց ծունկերը ձյունին մեջ:
Ո՞վ չէ տեսած, ձմեռ ատեն, լեռան վրա, որ
ամեն սպիտակություն բաղդատաբար կդառ-
նա նսեմ և գորշ: Դժգուն դեմք մը կթվի
տարօրեն սեցած, լվացված կտավ մը կթվի
աղտոտ, թուղթը գույնն ունի շոր տիղմի:
Այն օրն հակառակը կտեսնվի, ամայի և
շինչ և երկնամուի այն բարձունքին վրա:

Հիսոս, մինավորիկ, կաղոթեր մեկուափ:
Հանկարծ իր դեմքը փայլեցալ ինչպես արե-
դակը, և իր զգեստները պայծառացան ինչ-

պես ձյունը, որ կփայլի արևուն մեջ, շինչ
ինչպես ոչ մեկ նկարիչ կամ ներկիչ պիտի
կրնար ներկել կամ երևակայել: Ձյունին
պայծառության վրա պայծառություն մը ա-
վելի հզոր, շողլուն մավելի զորավոր քան
բոլոր ճանչցված պայծառությունները,
կհաղթեր ամեն երկրավոր լուսի:

Պայծառակերպությունը հանդեսն ու
հաղթությունն է կույսին: Մնալով դեռ—այն-
քան քիչ ատենի համար—մարմին և նյութ,
Հիսուս կառնե նյութին ավելի նուրբ, ավելի
թեթև, ավելի հոգեղեն վիճակը: Իր մարմի-
նը, որ կսպասե աղատարարին, կդառնա
լուս արևու, լուս երկնքի, լուս իմացա-
կան և գերբնական. Իր հոգին աղոթքին մեջ
գերմարդկայնացած, տեսանելի կըլլա իր
հրաշեկ փայլերով մարմնուցն ու կտավին
պատճեցն, ինչպես բոց մը, որ կուտե պա-
տերն, ուր փակված էր և զանոնք թափան-
ցիկ կընե:

Բայց լուսն հավասար չէ դեմքին և
զգեստներուն վրա: Դեմքին լուսը արեւուն
լուսն է, զգեստինը կնմանի ձյունին պայ-
ծառության: Դեմքը՝ հայելի հոգվույն, կրա-
կին գույնն ունի. զգեստները՝ ածանցված և
ծառայական՝ սառի: Վասնզի հոգին արև է,
կրակ է, սեր է: Բայց զգեստները, բոլոր
զգեստները, նաև այն ծանր զգեստը, որ
մարմին կկոչվի, անթափանց է, սառուցիկ,
մեռուտ, և չի կրնար փայլիլ, եթե ոչ անդ-
րադարձ լուսով:

Բայց Հիսուս, բոլոր լուս, դեմքովը, որ կպարմի և կփայլատակե հանդարտ փայլակումներով, զգեստներով, որ կըողջողան ճառագայթարձակ սպիտակությամբ—ոսկի, որ կփայծակե արծաթին միջև—միան չէ: Երկու մեծ մեռյալներ, շինչ ինչպես հնըթ, կմոտենան Անոր և կիսուին հետու: Մովսես և Եղիա: Առաջինը փրկիներուն, առաջինը մարգարեներուն: Լուսն և կրակե մարդիկ կուգան վկայություն բերելու նոր լուսին, որ կփայծակե Հերմոնի վրա: Բոլոր անոնք, որ խոսած են Աստուծո հետ, կմնան լույսի մեջ ծրարված ու թաթավուն: Մովսեսի դեմքին մորթը, երբ իշավ Սինային, այնքան փայլուն դարձած էր, որ ստիպվեցավ քողով դեմքը ժամկել շլացնելու համար իր ընկերները: Եվ Եղիա հափշտակվեցավ երկինք Հրեղեն կառքով, քաշված հրեղեն ձիերեւ: Հովհաննես, նոր Եղիան, քարոզեց կրակի մկրտությունը, բայց իր դեմքը, եթե սեցավ արևեն, շփայլեցավ ինչպես արեր: Միակ պայծառությունը, որ իրեն վիճակվեցավ, Եղավ ուկեղեն սկուտեղինը, ուր դրվեյավ իր արյունաշաղախ գոլփսը, արքայական նվեր Հերովդեսի քրեիթուր՝ աղաքուր հարճին:

Բայց Հերմոնի վրա Ա՛ն է, որ կփայլի դեմքովն ավելի քան Մովսեսը, և պիտի վերանա երկինք ավելի կատարյալ կերպով քան Եղիա—Ա՛ն, զոր Մովսես խոստացած էր և որ պիտի գար Եղիային վերջ: Եղած են Անոր քով, բայց վերջն աներեւութանալու համար ընդմիշտ: Այս վերջին վկայութենեն լիբու այլևս կարևոր չեն: Աշխարհը այլևս

պետք պիտի շունենա իրենց օրենքին և իրենց հույսերուն: Լուսեղեն ամպ մը կծածկե երեք պայծառակերպները երեք մթիններուն աշխարեն, որ կսպասեն, և ամպե մը ցայն մը կիշնե աղաղակելով. «Ա՛դ է իմ սիրելի Որդին. աղո՛ր մտիկ ըրեք»:

Այպէ չի ծածկեր լույսը, այլ կկրկնապատկե: Ինչպես մըրկին ամպեն կփրթի փայլակը, որ կլուսավորե հանկարծ դաշտը, կիշնե բոցը, որ կսպառե, կայրե հին կտակը և կհաստատե հավիտյան նոր ավեսիթը: Հորդանան, սև ամպը, որ կլեցներ Տապանակը և զայն կծածկեր վախի և պղծության օրերուն մեջ, եղած է վերջապես ամպ մը լուսի այնքան հզոր, որ կծածկե մինչև իսկ արեգակնային պայծառությունը դեմքին, որ պիտի ապտակվի վերահաս աղջամուղներուն մեջ:

Բայց ամպը կցնդի և դարձյալ մենավորէ Հիսուս Երկու հառաջընթացներն ու վկաներն անհետացած են: Իր դեմքը առած է ընական գույնը, իր զգեստը ամեն օրվաննէ: Քրիստոս, սիրային եղբայրը դարձած, կդառնա սահմուկած ու շլմորած ընկերներուն. «Ելեք և մի՛ վախնաք, բայց ո՛չ որի մի՛ պատմեք ինչ որ տեսաք, մինչև որ Մարդուն Որդին մեռելներեն հառնե»:

Պայծառակերպությունը ստվերագիծն է Համբարձման»:

(«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ», թբմ.
Հ. Արսեն Ղազարոս Ղազիկյան, Վենետիկ,
Ս. Ղազար, 1926):

